



3 (158). ԱԳՌԱՎ

Շատ ու շատ չառեջ թագավոր մե կէղնի, էդ թագավոր շատ ղալըմ կէղնի, օր մե մըջ ուր մտքին կըսե. «Հմալ քոշկ ու սարե մե շինել տամ, օր մըջ ախշարին չէղած»: Հրամանք կէնե՝ գիկան ուստեք ու իրղըղներ, լուսումթից շուրի չիրկուն կը շարին, առավոտոն կը տեսնան՝ պատեր ըլուկ, քարեր թափած վըր չիրարու թագավոր հա՛մ կը գարմանա, հա՛մ գալլաքուշտ կէղնի, խորհուրդ կէնե հըտ վազիր-նազիրին, կը կանչին էրկրի մեջ ինչ խըղար գիտնակ ու բանիմաց մարդ կա, կը բերին, թագավոր կըսե.

— Զիգա փրուզեն չիմցեք, ընձի ըսեք, թե չիմնաք՝ ձեր գլխըներ կը թոցում:

Մարդիկ կը ժողվին վըր չիրար, գլուխ ուրանց կը կոտորին, կը թալին բունին, վեռջ չըն կոնա չիմնա: Մարդ ո՛ր գինա ո՛ր դինն ւեթրազ հալվոր մարդ մե գիկա, կը մտնա թագավորի քոշկ ու սարեն, օղջում կիտա, կըսե.

— Թագավոր ապրած կենա, թե գուզիս օր քու քոշկ ու սարի պատեր չը բլին՝ պտի ջահել աղջիկ մե դնիս մըջ պատ-հիմքին, շարիս, ծածկիս, էն գահ պատեր էլ չըն բլի:

Թագավոր դալալ կը հանե, կիտա կանչել.

— Ո՛ն օր ուր աղջիկ ծախե թագավորին, ուր քաշով մեկ օսկի կառնե՛:

էդ ժամանակ մըջ թագավորի քաղքին՝ խուպող, ջադուքար պառավ մե կապրեր հըդ ուր քոռջ որբ աղջկան: Գինա, կը խաբե տանե գաղջիկ, կը ծախե թագավորին, ուր քաշով մեկ օսկի կառնե, ըռհաթ

գիկա տուն, կուտե, կր խմե, քեֆ կէնե, շայնամ թե ուր քրոջ աղջիկ
պտի մեռնի:

Աղջրկան կը քաշին, բերին դնին մըջ պատ-հիմքին, կը շարին,
օր կը շարին՝ մարդիկ ահուզար կէղնին, հմա շըն կունա ձեն հանի,
շըմքի թաղավոր շատ անողորմ կէղնի, պառավ լե շը խղճացեր է:
Պատեր կը շարին, կը բանձըրցուն, եբ կը հասնի աղջկա բերնին,
աղջիկ ղպառավ կանիծե. օր կանիծե՝ աստծու հրամանքով պառավ
զուր խլըխ կը փոխե, կը դառնա սև ագռավ, կը թռնա դես, կը թռնա
դեն, կը կռկռա: Ու կըսին շուրի մկա էրկրի յերեսին ինչ խըդար ագ-
ռավ կա, ընդրնե ինչ յառեջ էկած:

